

ներու, որքան բազմապատկենք մեր նիւթական առատաձեռն օժանդակութիւնը, նոյնքան ևս կողելորենք և խրախոյս կտանք այդ բարենպատակ ընկերութեանը և հետեւաբար կփութացուցանենք բնութեան հայ զաւակների տգիտութեան ճիրաններից փրկութեան օրը, որով և մեզ համար բաժին վաստակած կլինինք այն յաւիտենական յիշատակից օտանվերջ օրհնութիւններից, որոնցով մեր ապագայ սերունդն անշուշտ պէտքէ անմահացնէ իւր փրկութեան գործին մասնակցողների անունները:

Ազգիս Ա. Ե. Հայրապետի օրհնութեան և խրախուսանաց ևս արժանացած է յիշեալ ընկերութիւնը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՅԻՆ ԽՆԴՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԵԹՈՂՈՎ

Ե Ի

#### Հ Ր Ա Ի Ե Ր .

Այս օրերս Ազգիս Ա. Ե. Հայրապետի հրամանով եւ նախընթաց կարգադրութեամբ Ս. Էջմիածնի Սինոդը իւր կարեւոր հրահանգների հետ միասին ուղարկեց Ռուսաստանի Հայոց Ամսխոտորիաներին եւ Հոգ. Կառավարութիւններին Հայաստանի սովետոյ խնամատար Յանձնաժողովի նուիրատուները: Մեծայայտեմք, որ մեր Ռուսաստանի Ազգայինները, ինչպէս շատ գէտքերում, նոյնպէս եւ առաւել եւս այս գէտքում կպսակեն յիշեալ Յանձնաժողովի եւ Ա. Ե. Հայրապետի յոյսն ու ակնկալութիւնը իւրեանց առատ նուիրաբերութիւններով:

Ռուսաստանի Հայեր, Գուք, այս, շատ կարեւոր գէտքերում կատարել էք Ձեր կարեաց չափով մեր Տաճկաստանի Հայ եղբայրների վերաբերութեամբ՝ Ձեր ազգային պարտականութիւնները. մի գանդաղիք եւ այս չարազէտ գէտքում կատարել եւ ներկայ ամենամահաբաժնի պարտականութիւնը գէտի նոյն եղբայրները, պարտականութիւն՝ որից կախումն ունին նոցա կեանքն ու մահը:

Ամենայն որ խոստովանուով է, արդարեւ, որ Գուք սկզբում վերաբերւեցաք դէպի Ձեր՝ սովից տանջւող տաճկահայատակ հայ եղբայրները մի անօրինակ ջերմեռանդութեամբ եւ զգալի կարեկցութեամբ՝ մինչեւ անգամ շատ տեղերում Ձեր անհրաժեշտ եւ աւելի ծանր կարօտութիւնները առ ոչինչ համարելով:

Բայց, ով Հայեր, մեծ վտանգին դիմագրաւելու համար մեծ ոյժ է հարկաւոր, ահա՛ մեր Ազգն ու Հայրենիքը, որոնց մենք շատ անգամ մինչեւ անձն զոհելու չափով պատրաստականութիւն ենք ցոյց աւելիս խօսքերով, չարագուշակ վտանգի մէջ են. եւ մեր եղբայրները ի տեղիս ակղիս Հայաստանի՝ մահամերձ տառապումն անագորոյն եւ սպառիչ սովի ճիրաններում, որից ազատուելու համար ոչ թէ անձնագոհութիւն, այլ լիառատ օժանդակութիւն են խնդրում ու աղաչում. եթէ կայ Ձեզանում ազգային կենդանութիւն, եթէ կայ Ձեզանում ազգասիրական վեհ զգացմունք. եթէ կայ Ձեզանում վերջապէս Ձեր տառապեալ եղբայրներին սիրող եւ նոցա վշտերին կարեկցող սիրտ, ահա՛ այդ գեղեցիկ յատկութիւնները գործով տրտայտելու պատէ՛հ ժամանակ. գթացէ՛ք Ձեր եղբարց դառն վիճակին, բաշխեցէ՛ք Ձեր առատ նուէրները, որ գէթ նոցա մահացու քաղցը լցուցանող եւ նոցա ամօթալի մերկութիւնը պատըսպարող ցամաք հացն ու անշուք ծածկոյթը կարողանաք մատակարարել. ահա Ձեզ ընդարձակ ասպարէզ, որի մէջ կարող էք ամբողջ աշխարհին ցոյց տալ Ձեր ազգային արժանաւորութիւնները եւ քաղաքակրթութեան ընդունակութիւնը:

Ո՛վ զաւակասէ՛ր Հայ ծնօղներ—հայրեր ու մայրեր, դուք որ անձնական փորձով քաջագէտ էք ծնօղաց դէպի զաւակները ունեցած գթոյն եւ սիրոյն, նոյն ծնօղական գթովն ու սիրովը յիշեցէ՛ք այն մերկ ու քաղցած հազարաւոր անմեղ Հայ մանուկներին, որոնք աղեկտուր ձայնով և՛ հայ և՛ հայ են աղաղակում եւ իւրեանց ծնօղաց առաջին չարաչար տանջւում. նոքա Ձեր հահարագատ զաւակների հետ միասին մեր ապագայ սերունդը պէտքէ կազմեն. օգնեցէ՛ք եւ փրկեցէ՛ք դոցա մահից: